Միդ.

Ի ստամպօլու գիր առի, յորում գրի. ի խալճի հրէայս խաբէութիւն գտեալ արտաքսեցան ի տարապխանայէ աւելի քան զհազար, և ի տեղի նոցա հայք յաջորդեցին. և զտիւզոլու միքայէլ աղայն խալճի պաշի արարին։ Թագաւորին դուստր մի ծնաւ և արարեալ են տօնանմայ զաւուրս հինգ։ (Մելգոնեան առ Հ. Մկրտիչ, 1763 յունվ. 22. [Ս. Ղազար])։

Միե.

Զանքատիմ կոչեցեալ խանն ըսպահանու ելեալ ՃՌ. ասգեարով, բոլոր աճամիստանն յաւար հարկանելով և իւր պետութեան ենթակայ առնելով, եկն և եհաս ուռմիայ, այժմոյս ուռմիայ շրջապատեալ են զօրքն և ինքն նստեալ է ի քաղաքն թարվէզ... մեր խոտրջրոյս Բ տղայ թարվէզու էկին, նոքայ ստուգապէս պատմեցին։ Սահակ վարդապետն որ մակ անուամբ կոչիր ահագին, յանկարծակի մահուամբ մեռաւ, ոչ խոստովանութիւն և ոչ սրբութիւն և ոչ կտակ. ՃՃ քսակն յելաւ։ (Տէր Յակոբ Տէր Ղազարեան քահանայ ի խոտրջրոյ առ Մելգոնեան, 1763 մարտ 17. [խոտրջուր])։

Միզ.

Յաւուրս յայսոսիկ աստ առաջի լիտոյին գոյր պէյլիկ նաւ մի, որ սպասէր մտանել ի յիլիմանն. և յանկարծ յարեաւ հողմն սաստիկ արևելեան և նաւն գոլով յոյժ հին և չհանդուրժեալ բռնութեան հողմոյն խորտակեցաւ, և իբր չորս հարիւր անձինք հեղձան ի ծովն արք և կանայք և տնվորք մտեալ ի նա ի զանազան տեղեաց գալ ի Վէնէտիկ։ (Մելգոնեան առ Հ. Զաքարիա, 1763 մարտ 19. [Ս. Ղազար])։

Միէ.

Լինելի տօժն է մեր բրօգուրաթօտ մօչինիկոյն, որ ստիպեալ յեղբօրէն յանձն էառ զտօժութիւնն, զի ինքն ոչ կամէր. բայց զի մի տրտմեցուսցէ զեղբայրն զիշաւ։ Սորա զամենայն ծախսն, իւր եղբայրն տեսանէ վասն պատուոյ տանն, և այն գաւալերութիւնն, որ անկանի ինքեան, տայ միում եղբօրորդւոցն և ինքն ապաթիի զգեստ զգենու։ Այլ այն կարծիք, թէ զամուսնացեալն ոչ առնեն տօժ, և թէ եթէ իցէ ամուսնացեալ հրաժարիլ պարտի, անհիմն կարծիք է։ (Մելգոնեան առ Հ. Մկրտիչ, 1763 ապրիլ 10. [Ս. Ղազար])։

Միը.

Ընդ մեռանիլ երկրորդի արքայի ռահիտ կոչեցելոյ իւրով մահուամբ, որ եղև ի 8 ապրիլի ըստ նորոյն, ի բանտ արկան երեք լուսայափոխքն նորին անուանիք, և դեռ ի բանտի պօստանճիպաշիին կան, և մնան յետ պայրամին տալ զհամար տուրևառութեան, զի ասի թէ պահանջի ի նոցանէ 18000 [տ]աղանդ արծաթոյ, և կարծեմ թէ մահ ևս լինիցի միում ի նոցանէ, որ երբեմն աշակերտ էր մխլայիմիին։ (Հ. Իգնատիոս առ Մելգոնեան, 1763 ապրիլ 19. Կ. Պոլիս)։